

Սիրելի Մելգոնեանցիներ և Բարեկամներ,

Նախ եւ առաջ Կալիֆորնիոյ Մելգոնեան Սանուց Միութեան անունով ցնծութեամբ կ'ողջունեմ մեր բոլորին շատ սիրելի Պրն. Սեպուհ Աբգարեանի ներկայութիւնը մեր մէջ: Պրն Աբգարեան մեր պատուոյ հիւրն է այսօր, եւ այս առթիւ կուզէի մասնաւոր շնորհակալութիւն յայտնել իրեն որ սիրով ընդառաջեց մեր հրավերին: Մենք ուրախ ենք որ իր ներկայութիւնը կը վայելենք եւ յանձինս իրեն մեր այս հանդիսութիւնը մասնաւոր փայլք մը կը ստանայ: Անկասկած մեր այսօրուան յաջողութեան մեծագոյն մասը իրեն կը պարտինք:

Սիրելի՛ Մելգոնեանցի եղբայրներ եւ քոյրեր: Այս անցնող տարին Մելգոնեանցիներուն մեծ ընտանիքին համար եղաւ խիստ դժուարին եւ տագնապալի տարի մը: ՀԲԸՄիութեան Նիւ Եորքի Կեդրոնական Վարչութեան Մարտ 16, 2004ի յայտարարած անարդար եւ ապօրինի որոշումը՝ Մելգոնեան Կրթ. Հաստատութիւնը 2005-ի Յունիսին վերջնականապէս փակելու մասին՝ խոր յուլում եւ արդար ընդվզում յառաջացուց Մելգոնեանցիներու լայն շրջանակներէն ներս: Արդարեւ, անցած ութ ամիսներու ընթացքին Մելգոնեանի կապակցութեամբ բոլոր Սանուցներու խնդրագիրներն ու դիմումները, առաջարկութիւններն ու թելադրութիւնները ուղղուած Կեդրոնական Վարչութեան՝ անտեսուեցան ամենեւին եւ մնացին անպատասխան առանց որեւէ անդինքի:

Անցեալ Հոկտոմբերին, Կալիֆորնիոյ Սանուց Միութեան հետ Լոս Անձելըսի մէջ իր ունեցած հանդիպումին ընթացքին, Պրն Պերձ Սեդրակեան մեզի հաւաստիացուց որ Մելգոնեանը փակելու և ծախելու ծրագիր չ'կայ եւ բնաւ Կեդր. Վարչութեան օրակարգի հարց չէ եղած, եւ թէ Մելգոնեանը պիտի մնայ եւ յարատեւէ այնքան ատեն որ ՀԲԸՄիութիւնը գոյութիւն ունի, եւ ինչ որ կը կարդանք թերթերու մէջ՝ անհիմն վրոյցներ են: Մելգոնեանի տարեկան պիւտձէի բացը բնաւ խնդիր մը չէ, ըսաւ ան, քանի որ ՀԲԸՄը տնտեսապէս բարւոք և բարգաւաճ վիճակի մէջ կը գտնուի: Պրն Սեդրակեան նոյնպէս հաւաստիացուց որ Կորդըն Էնդերսըն Մելգոնեան գործուղուած էր պարզապէս ուսումնասիրելու համար դպրոցին դիմագրաւած տնտեսական եւ վարչական դժուարութիւնները եւ լուծում մը գտնելու: Եւ մենք հիմա գիտենք թէ Կորդըն Էնտերսըն ինչ դեր կը խաղայ եւ ինչ է իր առաքելութեան բուն նպատակը: Դժբաղդաբար Պրն Սեդրակեան ճշմարտութիւնը չէ որ կ'ըսէր մեզի: Դպրոցը փակելու որոշումը վաղուց առնուած էր արդէն:

Ջանապան երկիրներու մէջ կազմակերպուած Մելգոնեան Սանուց Միութիւններու հետ կապ պահելով՝ խորհրդակցաբար հասանք այն եզրակացութեան թէ մի'այն դատական միջոցներն են որ կը մնան, ՀԲԸՄ Կեդր. Վարչութիւնը ստիպելու որ հրաժարի Հաստատութիւնը փակելու եւ ծախելու գաղափարէն: Մեր բոլորին մտքերուն մէջ պէտք է յստակ ըլլայ թէ Սանուցին բռնած դիրքորոշումը միայն ու միայն Կեդր. Վարչութեան ապօրինի որոշումին դէմ է: Մեր հակառակութիւնը ՀԲԸՄիութեան դէմ չէ՛: Մենք միշտ եղած ենք Բարեգործականի համակիր եւ Բարեկործականի բարի գործերուն եւ ծրագիրներուն ջատագով եւ պորավիզ: Մեզմէ շատեր անդամ են եւ կը շարունակեն իրենց անդամակցութիւնը:

Սակայն Մելգոնեանի նման «սրբանուեր և թանկագին» դպրոց մը կազմալուծելը՝ պարզապէս սրբապղծութիւն կը նկատենք:

Մի քանի ամիս առաջ մենք սկզբնական հանդիպումներ ունեցանք Լոս Անձելըս գտնուող խումբ մը Հայ փաստաբաններու հետ որոնք ուսումնասիրեցին Կարապետ Մելգոնեանի Կտակը եւ ծանօթանալէ յետոյ հարցին մանրամասնութիւններուն՝ մեզի յայտնեցին հետևեալը.-

1.- ՀԲԸՄ-ը պարզապէս TRUSTEE -ներ եւ գործակատարներն են Մելգոնեան Կտակին: Մելգոնեան Հաստատութեան առնջութեամբ կատարուելիք որեւէ փոփոխութիւն, փակելու, ծախելու, տեղափոխելու եւայլն, այդ Կտակին հանդէպ ապօրինի ոտնձգութիւն կը նկատուի:

2.- Եթէ ՀԲԸՄ-ը որպէս գործակատար անկարող է Դպրոցը մատակարարել եւ յանձանձել ձեռնհասօրէն, լաւ կ'ըլլայ որհրաժարի եւ այդ պարտականութիւնը յանձնէ մէկ այլ կազմակերպութեան, ըստ Կտակին ցուցմունքներուն:

3.- Դատական գործողութիւններու կարելի է ձեռնարկել որպէսզի դատարանի միջոցաւ արգիլուի Մելգոնեանի կարգավիճակի որեւէ փոփոխութիւն՝ ՀԲԸՄիութեան կողմէ:

Եզրափակելու համար կ'ուզէի աւելցնել հետևեալը.-

Պրն Սեդրակեան կը պնդէ թէ ՀԲԸՄ-ը TRUSTEE-ներ չեն այլ՝ տէրն ու տիրականը Մելգոնեան Դպրոցին, քանի որ նուէր տրուած է իրենց: Հետևաբար, իրենք իրաւունք ունին վայն գոցելու եւ կամ ծախելու: Պէտք է աւելցնել որ Պրն Սեդրակեան պարզապէս կ'ուզէ անգիտանալ եւ անտեսել Կարապետ Մելգոնեանի 1925-ին եւ 1926-ին կնքած համաձայնագիրը ՀԲԸՄ-ի հետ: Մեր փաստաբաններուն գործը ուրեմն պիտի ըլլայ նախ եւ առաջ փաստել թէ Պրն Սեդրակեանի պնդումները արարկելի են եւ օրինական հիմք չունին: Այս ընելու համար անհրաժեշտ է արխիւային պրպտումներ կատարել վանազան երկիրներու մէջ ուր ՀԲԸՄ-ի եւ Մելգոնեանի առնջութեամբ արխիւներ եւ փաստաթուղթեր պահուած են:

Բայց և այնպէս, կը յուսանք և կը մաղթենք որ ՀԲԸՄ Կեդրոնական Վարչութիւնը անսալով ամէն կողմէ բարձրացող փողոքի ճիչերուն, այլ մանաւանդ Կիպրոսի կառավարութեան, Կիպրահայ համայնքին, և Մելգոնեանցիներուն կողմէ եղող ճնշումներուն, կ'անդրադառնայ Մելգոնեանի նկատմամբ որդեգրուած սխալ քաղաքականութեան և վերատեսութեան ենդարկելով՝ կը սրբագրէ Մարտ 16-ի անարգ որոշումը, և մենք կարիքը չենք ունենար դատական միջոցներու դիմելու:

Մենք, Մելգոնեանցիներս, երախտաշատ վաւակներն երբ Անմահ մեր Բարերարներուն եւ մեզի կ'իյնայ ի գին ամէն զոհողութեան աշխատիլ որպէսզի Մելգոնեան Եղբայրներու տեսլականը եւ մեզի փոխանցուած աւանդը պահուի, պահպանուի և յարատեւէ՝ Կիպրոսի մէջ:

Հայաստանի մէջ բացուելիք հարիւր սենեականոց, Բէմբ Նուպարի

ոճով, Մելգոնեան Կեդրոնը չենք խորհիր որ պիտի կարենայ փոխարինել Մելգոնեանի նման գիշերօթիկ վարժարանի մը դերը Սփիւռքի նորահաս սերունդին կրթութիւն և հայեցի դաստիարակութիւն ջամբելու տեսակետէն: Մենք ի սրտէ յաջողութիւն կը մաղթենք եւ կը պօրակցինք ՀԲԸՄիութեան բոլոր ծրագիրներուն, ըլլան անոնք Սփիւռքի մէջ թէ Հայրենիքի: Բայց եւ այնպէս, այդ ծրագիրներուն իրագործումը պէտք չէ՛ որ ըլլայ ի գին եւ ի վնաս Մելգոնեան Հաստատութեան:

Մեր հաւաքական ճիգերով պիտի աշխատինք անօթի գայլը կուշտ պահել, որպէսպի մեր ոչխարը ողջ մնայ: Կը գիտակցինք թէ դիւր ին բան չէ՛ ասիկա: Մեր նպատակին յաջողութեան համար անհրաժեշտ է դրամական մեծ պոհողութիւն, հետևաբար պէտ՛ք է որ մեր քսակները լայն բանանք եւ մեր կարողութեան համեմատ՝ մասնակցին՛ք դրամահաւաքի արշաւին:

ԿԱՐՕ ԳԱՍԱՊԵԱՆ

6/13/2004